

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻԻ 14

1 Նոյեմ. 1894

Կ Ա Ր Գ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Ե Ի

Ա Ր Ա Ր Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ժ Ա Մ Ա Տ Ե Ղ Ե Ա Յ

Շարայարուքիւն (*) Եւ վերջ

Յորժամ ի պատարագի զխորհուրդն վերայերեղ կամեցիս,
այս է արարողութիւնն:

Յորժամ զողէ սարկաւազն Մի ոք յերեխայից, եւ զպիրքն
Մարմին տերունական, քահանայ մի սարկաւազօք եւ զպրօք
երթայ եւ առնու զընծայն, եւ սարկաւազքն առաջի եւ զպիրքն
զինի, լապտերօք եւ քշոցօք, եւ սարկաւազն բուրվտով: Եւ
յորժամ վճարի մարմին աչքունահանն, սարկաւազն զողէ բարձր
ձայնիւ Որք գրեթովքիցն, եւ առնու ի նմանէ Աւազ երկդու
դաստվարն եւ ստէ զայս ի լըման. եւ զան յարեւելից կողմն, եւ
սարկաւազն ձայնէ բարձր, շանապարհ արարեք այնմիկ, ի ԼԵ:

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տարի. Թիւ 13

ման ասէ. եւ ապա սկսանին զԵւ կենդանարարն. եւ երբ դան ի հարաւակողմն, սարկաւազն ձայնէ բարձր, Աստուած ի հարաւոյ եկեացէ. եւ ապա սկսանին Զամենայն զկենցադականս. եւ դան յաստիճան խորանին. եւ քահանայն որ ունի զընծայն ի ձեռն՝ ասասցէ բարձր ձայնիւ Համբարձեք ի լրմանս. իսկ եթէ Եպիսկոպոս կամ թէ պատուաւոր որ է որ զպատարազն մատուցանէ, գայ ընդ առաջ եւ խնկարկէ, եւ հարցանէ. Ո՞վ է սա. եւ սկսանին Որպէս զբազաւորն ամենեցուն. եւ երբ վճարի, ասէ քահանայն՝ Համբարձեք իշխանք զդրունս ձեր, ի լրմանս. Եւ որպէս նա հարցանէ զնոյնն, Ո՞վ է սա. եւ ապա սկսանին Եւ զհրեշտակացն, եւ երբ վճարի՝ դարձեալ ասէ քահանայն Համբարձեք իշխանք, ի լրմանս. Եւ Եպիսկոպոսն հարցանէ Ո՞վ է սա. եւ առնու ի ձեռացն եւ հանէ ի սեղանն եւ երգեն զալէլուէն. եւ երբ վճարի սարկաւազն քարողէ. Եւ եւս խաղաղութեան գտեր:

Եւ ոմանք այսպէս վերաբերեն զՍուրբ Խորհուրդն ի սեղանն, զինի տէր ողորմեային ասեն Որք գ՛րեթովքեն, եւ զխորհուրդն վերաբերեն ի սեղանն, եւ յետոյ ասէ սարկաւազն Մի որ յերեխայից: Մարմին տերունական: Եւ սարկաւազն ասէ Սաղմոս ասացեք Տեառն Աստուծոյ մերոյ: Եւ ապա ասեն զաւուր պատշաճ սրբասացութիւնն, եւ զինի Եւ եւս խաղաղութեան գճեր:

Իրաւոք ժամատեղեաց քառ Արեւելեան սահմանացն յալրուածոց եւ առաքեանց աղօթից, գոր խնդրեաց Սուրբ վարդապետն Յակոբ Ղրիմեցի, ի մեծ Բաբուճոյն Գրիգորէ Խլարեցւոյն. եւ կատարեաց այսպէս.

Որ դասի որ աւուր ձայն լինի այս է.

Տեր երբ գըրթունս: Զքեն գոհանամք: Օրհնեալ տեր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս: Կանոնադուրսն, կանոնի աշխն. զինի ալէլուիայից եւ թագաւորայն Սաղմոսիք եւ օրհնութեամբ եւ այլն որ լինի: Մեծացուցէի աղօթն, այլ եւ ողորմի փառքն: Սուրբ Աստուած, Աղօթն: Արձակման աղօթն թէ՛ պահոց թէ՛ ուսուցաց: Արեւադալի Սուրբ եւ տէրն. եւ արձակմանն ձաշու, Առաջնորդեա: Հայր զբութեանց: Անկեայն: Ձաշու սկսուածքն: Եւ երեկոյեան սկսուածքն: Լուր ձայնիցն: Համբարձին: Յոյս կենացն խաղաղականին: Շնորհատու բարեաց:

Իսկ կողման դասուն սկսուածք Օրհնութեանն եւ Հարցին, եւ իւր ազօթիցն, Տէր յերկնիցն եւ իւր փառացն, Սարբ եւ տերն զկնի ճանկոնց:

Արեւազալի աջին, Չառաւստոս աղօթս, ճաշու, Խաղաղութեամբ: Փարատեա, Քրիստոս որդի Աստուծոյ: Ժամամար, շաբաթի ճախին է:

Կիւրակէից ճաշու Ետային եւ Աւետարանն ճախին է. Առաքեալն կողման. իսկ լուր աւուր զիրքն կողման է. Աւետարանն ճախին. Երեկոյի Խոնարանեցո ճախին. Ապրեցո, Հայր գրքաճն. Տէր բարեբարն. Քրիստոս որդին՝ կողման. Հայր մեր որ յերկինս ես, ճախին:

Աղօթքն քսան եւ չորս ըստ քսան եւ չորս ժամուցն: Իսկ Տէր մեր եւ փրկիչ, Տէր Աստուած մերն ի կարգէ դուրս է, Ժամարարին է եւ պատուաւոր հիւրին:

Զկնի Զքին գոհանաւքի, յորում դասի որ զկանոն սաղմոսին տան, զաւետարանն եւ նոքա ընթեռնուս անպատճառ. իսկ զԻւղարերից Աւետարանն պատարաղիչն ընթեռնու անփրէյր:

Այս է Արեւելեան տան սահմանն ժամակարգութեան ի փառս Աստուծոյ:

Աղցից կիւրակէիցն ի տեղի հանգստեան շարականին ասա՝ զԱյսօր անճառն. որպէս նշանեցան, Աւետարանն Խաչելութեան ըստ ճախին. եւ երգ ի Նորագոյէն մէկ փոխ, եւ սուրս հոգեոյ. զի ի պահոցս հանդատեան շարական եւ Աստուած անեղ ոչ գոյ. Փառք հրաշափառին խաչելութեան ասա. Ալէլուք Խաչին է ըստ ճախին. զհարաբերից սաղմոսն եւ Արին յորդորասա, զԱւետարանն ի ճախին զԹաղման միայն կարգա՛, Թողեալ զՅարութեան մասն: Զկնի Զամենայն անուշաւ երեք անգամ ճախիւ ասա, բայց զյեախնն բարձր. Փոխանակ Զուարճացեալքս զԱղաչեսցոք զկենաստոս փրկիչն ասա՛, եւ զիւր աջին Անկեալ առաջի բո: Ի Մաշնանն Խաչելութեան ասա միշտ եւ ոչ Յարութեան, զի յաղցից կիւրակէս Խաչի է ամենայն ինչ. Նորատեղծեալի զառաջին երկու տունն միայն ասա՛, զկնի Կեցո թիւ առանց աւետարանի.

Ճաշու ալէլուիա Աղաղակեցէք առ տեր լման ասա: Եւ ի Պատարաղին հանդատեան շարական, Խորհուրդ խորին. Յայս յարկ նուիրանաց ոչ գոյ. Օրհնեալ գովեալ խաչելութեան ասա.

Յերեկոյն մեսեղի Խաչի ասա. զԱսասցոսքն թիւ, զՍուրբ Աստուածն ողբածայն. Ձկնի համբարչոյն Խնդրեսցոսք. Կեցո թիւ:


Պահոց կիւրակէից կարգն այս է:

Ի պահոցս շաբաթի աւուրսն 'ի տեղի հանդատեան շարականի զաւուր ձայնի ապաշխարութեան ողորմեայն ասա. Եւ Աստուածածնի եւ խաչի. փառք: Ձկնի աւետարանին Հոգոց հանգուցելոց:

Յերեկոյն զԼոյս գոարքն թիւ ասա, սկսեալ 'ի Բուն Բարեկենդանի շաբաթի երեկոյէն: Մեղէրէ Ետուր երկիրաձաց քոց ասա, Ասասցոսք թիւ, Սուրբ Աստուած ողբածայն եւ զկնի համբարչոյն Խնդրեսցոսք, Կեցո թիւ: զԱրչակէան սաղմոն Աստ օրհնեցեք մի ասեր, զի Խաչի են կիրակամուտք ազուհայիցն:

Ի շաբաթու Ղազարու յարութեանն սկսիր ասել զհանգրստեան շարականն 'ի պաշտաման աւետարանին, եւ զկն Աստուած անեղ: Նոյնպէս եւ զկնի ողորմեայից 'ի պատարագին:

Ի ծաղկազարդի կիւրակէին զԻւղաբերից Աւետարան զթաղմանն միայն կարգն, որպէս 'ի յանցեալ կիւրակէան, զկի Չամեանայն առուրս, ըստ կարգին եւ զայլս: Ի մաղթանան Գալստեան ասա նոյնպէս եւ Օրհնեալ գովեալին: Նարաստեղծեալ, զերկուս տուանն միայն ասա, զի ոչ Յարութեան է կիւրակէս: Բայց Խորհուրդ Խորին ասի:



ԹԷ ԱՐԴԵՑՔ ԲՆԱԿՆԼԻ ԻՅՆ ԱՍՏԵՂՔ

Շարայարու երիւն (*) եւ վերջ

Գ.

Տիեզերաց վրայ կենաց սկզբնաւորութիւնը մեկնելու համար արարչագործ զօրութեան մը «գրութիւնը» մեր աստղաբաշխ հեղինակին կարծեաց բացատրութեանը յարմար չերեւելով՝ մեծ հաճութեամբ միւս երկու գրութիւնները կ'ընդգրկէ, կարծելով թէ՛ մին կամ զմիւսը ընդունելով, աստեղաց բնութիւնը «ստուգութիւն մը» կը ստանայ, մինչդեռ առաջին գրութեամբ ինդիւրն անստոյգ կը մնայ:

Բայց «ստուգութեան» արժէքը չճանչնալ է այս: Հաւաքաբանութեան մը մեծագոյնին տեղ՝ առնուլ ենթադրութիւն մը որ՝ ի խստագոյն միտո՞ւ կրնայ թերեւս պաշտպանուիլ, բայց չէ ամենեւին ապացուցեալ, եւ իբրեւ մի ստուգութիւն նկատել անկ է ելած եզրակացութիւնը, այս ամենեւին նոր եւ պատճառաբանութեան տարրական կանոններէն բոլորովին զուրս արամաբանութիւն մը ի դրո՞ծ ածել է արդէն: Բայց երբ ընկալեալ գրութիւնն գիտնականապէս ապացուցեալ մի մոլորութիւն է, եւ ըստ իմաստասիրութեան՝ անտեղի նախագասութիւն մը, յայնժամ իրաւամբ կրնամք զարմանալ թէ գիտուն ըսուելու արժանի մարդիկ, մշակեալ միտքեր, մինչեւ այս ստորիճան անմտութեան մէջ ինկնան:

Պէտք է արդեօք աստ յիշել այն վիճաբանութիւնը՝ որ ընդ երկար գիտուն աշխարհի միտքերը զրգոնց ներկայ դարուս առաջին կիսուն մէջ, ընդ մէջ «չլուսեալ» եւ «համասեռ» դրո՞ւսեան հետեւողաց, եւ յորում այս վերջինք, Պ. Փասթէօսի գեղեցիկ փորձերով՝ կարծեցեալ ինքնաբերական ծննդոց սեսութիւնը հիմնայատակ կործանեցին: Այնպիսի ակներեւ բացայայտութեամբ՝ որուն առջեւ այլասեռ գրութեան հետեւողաց ամենայամառներն իսկ խոնարհիլ պարտաւորեցան, ապացուցուեցաւ թէ, եւ ոչ զործարանաւոր էակ մը, որչափ եւ պարզ ու տարրական իսկ լինի, ըստ

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տարէ, Թիւ 13:

յիւլաց յառաջ չգար ի ծոց անդործարանաւոր նիւթոյ, այլ Ֆշք նախագոյ սերմէ մը յառաջ կուգայ:

Ուրեմն, ինչ իրաւամբ, իրրեւ չուկէա մի կարծեցեալ ստուգութեան առնու է իրողութիւն մը՝ որ ըստ գիտութեան՝ հիմնովին սխալ ճանչցուած է: Անշուշտ, բնագանցօրէն, եւ հետեւաբար արտաքոյ քան զահման բնական գիտութեանց, կրնայ ոք ինքնեակ ծնունդը իրրեւ կարելի բմբռնել, այնու իմաստիւ թէ՛ Աստուած՝ իւր արարիչ զօրութիւնը, կամ անընդմիջական միջամբտութեամբ, կամ զօրութեամբ մի կանխասահման օրինաց կրնայ շարունակել: Բայց, ըստ ինքեան գիտնականապէս սպացուցուած է թէ՛ աստ եւ այժմ սոյն երեւոյթն չիք ի միջի: Այլ սակայն, գերման աստղաբաշին՝ ոչ ըստ լոկ կարելիութեան իմաստին իւր ինքնեակ ծննդեան գրութիւնը կ'ընդունի, այլ պարզաբար «ըստ նիւթակրօն իմաստին», այս է երեւոյթ մը որ առանց իրիք պատճառի յառաջ պիտի գայ, եւ ինք պինքը ստեղծող ինքն պիտի ըլլայ, զոր եւ ի գրահաշուի սա հաւասարութեամբ կրնամք թարգմանել $0=1=10=10n$ կամ այսպէս, $0 > 1 > 10 > 10n$:

Ինչպէս ուրեմն կարող եմք ի լուրջ միտս առնուլ պատճառաբանութիւն մը՝ որ մի այսպիսի մե աղոյնի վրայ հաստատուած է ձեզ ըսելու համար, «եթէ երկրագնացոյս վրայ ինքնեակ ծնունդ «յառաջ բերելու համար պարագայներն յարմար եղած են, ամե՛հեւ ին պատճառ մը չկայ որ միեւնոյն կազմութիւնը ունեցող «երկնային մարմնոց համար եւս նոյնը չըլլայ, եւ, առաւել եւս, «ստուգութեամբ (?) կը մակաբերեմք թէ՛ այս հանգամանաց «մէջ գտնուող համօրէն աստեղք՝ համանման յօրինուածութեամբ «օժտուալ լինելու են (1)»:

Բայ աստի, մեծաղոյնը ընդունելով իսկ, հաւաքաբանութիւնն անհերքելի չմտար: Կ'ըսէ թէ՛ «Ամենեւին պատճառ մը «չկայ որ մի եւ նոյն կազմութիւնը ունեցող երկնային մարմնոց «համար եւս նոյնը պատահած չըլլայ»: Ինչէ՛ն գիտէ զայս: Իւր ինքնեակ ծնունդն, առանց ցօղունի եւ արմատոյ յողգող գիւլուածի մը արգասիք, կրցաւ յառաջ գալ աստ կամ անոյ, առանց յառաջ գալու այլուր, որովհետեւ գիւլուածական ըլլալուն համար է որ նմանութեան (analogie) օրինաց սակ չիմտար: Իսկ ընդհակառակն, եթէ արարիչ Զօրութեան մը կտմոց արգեանցը զայն վերադրելու ըլլայ, եթէ ոչ բացարձակ մի ստուգութիւն, գէթ

(1) Աստղագիտութեան Հանդէս, Յունիս, 1891, էջ, 217:

ամենամեծ հաւանականութիւն մը կ'ունենայք ըսելու թէ, այս արարչագործ Պատճառն որ անչափ իմաստուն եւ հանճարեղ է, եւ միանգամայն ամենակարող գոլով ոչ ինչ ընդ վայր կը ստեղծէ, ամենուրեք մեր երկրագունտին պարագայիցը նման հանգամանաց՝ մէջ դսնուող երկնային մարմինները կենդանի էակներով լեցուցած պէտք է որ ըլլայ: Բայց բուն խնդիրն նոյն է թէ «բո՛ւս մեր բնակած հողագնտին նման երկնային մարմինք, այս է ծանօթ կամ անծանօթ մոլորակներն, ունին բաւականաչափ նման յորինուածութիւն, որպէս զի կեանքն անդ կարելի լինի: Այն վայրկեանէն յորում փոքրիկ արեգակն՝ որ մեր բնակութեան վայրը պիտի ըլլար, երկնից վրայ փայլէն դադրեցաւ եւ կեղեւով պատեւրու սկսաւ, մինչեւ այն վայրկեան՝ յորում ջրային վայրասուղմունք եւ սկախառն մրուրք՝ նորա կեղեւային պատանքը յարմար վիճակի մէջ գրին՝ առ ի պահել զառաջին դործարանաւոր էակս, շատ մը հաղարաւոր դարեր անցնիլ պէտք եղան:

Ձննենք այժմ «զերբորդ գրութիւնը», որուն վրայ հեղինակն այսպէս կը խօսի:

«Միջավայրն կրնայ լի ըլլալ գործարանաւոր կամ ոգեւորելու «ստակ նիւթով, միօրինակ բաշխել, աւանց այս ինչ կամ այն ինչ «ստսեղ յատկացուելու, վասն զի մէն մի ստսեղ համար սկզբը «նաւորութիւն մը պէտք է ընդունիլ: Աստեղաց մակերեւոյթը «կ'առնու դայս կենդանային նիւթը» (իսկ բուսայինը) «որ՝ կարեւոր «հանգամանաց մէջ դսնուելու ստեն, կը զարգանայ եւ ոգեւորեալ էակներ կը յորինէ: Յոյ՞ն է (?) թէ այս պարագայս մէջ, «կեանքը տածելու ստակ բոլոր երկնային մարմնոց վրայ՝ գործարանաւոր էակաց գոյութիւնը ոչ թէ միայն հաւանականութիւն «այլ մի ստուգութիւն է:»

Այս ամենեւին յոյ՞ն է, թող չբժկամակի մեր դիտուն աստղաբաշխն: Վասն զի ինչպէս ըմբռնելու է, բոլորովին ունայն վայրի մէջ, ամեն մի՛նտրորտէ եւ բարեխառնութենէ զուրկ միջավայրի մէջ, այն բացարձակ զերօին մէջ՝ որ մեր հարիւրաստիճանեան ջերմաչափի զերօյէն հարիւրաստիճակ աւելի է, ինչպէս, կ'ըսեմ, ըմբռնելու է, այսպիսի միջավայրի մէջ, կամ լաւ եւս միջավայրի այս բացակայութեան մէջ, շատ մը կենդանի մասնիկներ, գործարանաւոր սերմեր, որք համօրէն միջատեղեան վայրը գրեթէ կը ըսուն միօրինակի Առաւել եւս, զսնունք ինչպէս ըմբռնելու է ի մերձավայրս արեգականց՝ յորս քայքայեալ լուծանիւն ամեն բաղադրեալ, նոյն իսկ ամենակարծր եւ զժուարահալ մարմիններ:

Մեզ պիտի պատասխանեն արդե՞օք թէ անոնք միջին գոտիներու մէջ իրարու կը հանդիպին, այնպէս որ արեգակներէն, բաւական հեռի գտնուելով՝ նոցին շերտութենէն չեն քայքայուիր եւ չեն ոճնչանար, եւ անոնց ազդեցութեան բաւական մերձ գտնուելով՝ ցուրտէն չեն փճանար: Բայց յայնժամ դուք կ'ենթադրէք թէ սոցա գոյութիւնն աստեղաց գոյութենէն կախումն ունի, որոց սակայն սկզբնաւորութիւն մը ունեցած լինելը կ'ընդունէիք: Եւ եթէ անոնք աստեղաց յորինուելէն յետոյ ծնան, ո՞ւտոից եւ կանո՞ Ո՞վ գանձք ծնաւ: Իրենք իրենցմէ յորինուեցան: Յայնժամ ինքնետակ ծննդեան կը դառնամք, եւ աւելի պարզ է մտորակաց վրայ ասոր ծագումը ընդունիլը, քան թէ միջալայրի մէջ, հոն անոր պատահելու համար:—

Ա՞րդեօք ի յաւիտենից կան սոքա: Բայց յայնժամ պէտք է որ աստեղք եւս ի յաւիտենից դոյացած ըլլան, որոց սակայն սկզբնաւորութիւն մը ունեցած լինելը կ'ընդունիք:

Այսու առթիւ, կրնայինք ցուցնել թէ որչափ անտեղի բան է աշխարհաց յաւիտենականութիւնը, նիւթոյ յաւիտենականութիւնը ընդունիլը, սակայն ինչորոյս այս կողմը քննելը մեզ շատ հեռուն կը տանի: Ուտոի առարկութիւն մը նշանակեցր եւեթ, որ պարզապար գիտական կարգէն, բովանդակ միջալայրը լեցնող գործարանաւոր նիւթոյ մը գոյութիւնը ենթադրուելէն յառաջ կուգայ: Նիւթ մը որ կազմակերպեալ է կամ ոգևորուելու ատակ, կշռելի նիւթ մը պիտի ըլլայ ի հարկէ:

Իսկ արդ, հռչակաւոր երկրաչափն Հիոն, իւր մի կարեւոր երկասիրութեանը մէջ, աստեղաց զանգուածոյն եւ շարժմանց վրայ յնաճ խիստ հաշիւներով կը ցուցնէ թէ, ո՞ր եւ է կշռելի նիւթոյ մը գոյութիւնը, որչափ եւ սա անշօշափելի, անօրացեալ եւ անդայտացեալ ըմբռնութի, իրրեւ անջրպետ միջամոլորակային (interplanétaire) բացարձակապէս անհնարին է, զի աստի մտորակաց շարժմանցը համար այնպիսի խանգարում մը յառաջ կուգայ որ բովանդակ մոլորակներ արեգակնային վրայ կ'իջնան:

Ահա այնպէս մեր աստղաբաշխին «երրորդ գրութիւնն» ալ, երկրորդին նման, չլինար պաշտպանուիլ: Իսկ օգտակարապէս հաստատել կարենալու համար աստեղաց բնակելիութեան կարծիքը՝ որ բառ ինքեան հաւանական եւ գրեթէ ճշմարտանման է, թէ եւ չկարենայ ազապուցուիլ, անհրաժեշտ պէտք է գալ այնմ՝ զոր գերման աստղաբաշխն կ'անուանէ իւր «առաջին գրութիւն»,

այսինքն՝ «արարչագործ զօրութեան»), կամ աւելի բացայայտ ըսելու համար, ապտուածային ամենակարողութեան:

Սյս հիւանս վրայ եւ եթ կրնամք համաձայնութիւն գոյացունել աստեղաց բնակութեան հոռոտակիցներուն հետ: Երկրային կեանքի հանդամանաց յառաջագոյն ուսումնասիրութիւնը, այն զանազան պայմանաց հետազօտութիւնը՝ յորս գործարանաւոր կեանքն կրնայ գեւ եւս ըմբռնուիլ, կամ սրովհետեւ նոցին յօրինուածութիւնքն ուրիշ օրինաց ենթարկուած կ'ըլլան, կամ որովհետեւ մեր ճանչցած նիւթէն տարբեր նիւթէ մը տարրազերտօրէն բաղադրուած կ'ըլլան, բնական աստղաբաշխութեան մեղ յայտնածին համաձայն՝ մեր արեգակնային զրութեան մոլորակաց կազմակերպութեան քննութիւնը, այս ամեն ինպիսիք շահաւէտ եւ օգտակար են անշուշտ յուսումնասիրութիւն: Մեր դիտուն աստղաբաշխն վերջապէս սա եղբակացութեան կը յանդի թէ մեղի տեսանելի բոլոր երկնային մարմնոց մէջէն «երկուքը կամ երեքը միայն, հաւանօրէն, կրնան պատշաճիլ մեր երկրաւոր գործարանային կենաց»: Բայց անմիջապէս կը յարէ թէ մեղի անտեսանելի եզոզ մոլորակներ, անոնք որ անշարժ աստեղաց շուրջը կը գտնան, այն հեռաւոր արեգակունք, անտարակոյս ի պոյութեան են, եւ եթէ ընդունիմք թէ մինն ի նոցանէ բնակիցի ըլլայ իւրաքանչիւր արեգակն շուրջը, կը հասնիմք, ըստ թուոյ մեղ ծանօթ անշարժ աստեղաց, ըսելու թէ հարիւր հազար բնակելի աստեղք հան, որ եւ ամենափոքր թիւն է:

Մեր եւս կը հաճիմք ընդ այս, բայց գիտել հոռոտաբ թէ՛ զուտ երեւակացութեան սահմանին մէջ կը յածիմք: Մեր հեղինակին յառաջ բերած հաւանականութեանց հաշիւն՝ ապացուցական արժէք մը ունենալ չթուիր մասնաւոր զիպուածիս համար, այս հաշիւ մեր արեգակնային զրութեան եւ աստղային զրութեանց հանդամանքներուն մի եւ նոցն ըլլալը կ'ենթադրէ, որ ամենեւին ապացուցուած չէ: Սյս վերջիններէն շատեր՝ չմարած արեգակներէն կրնան կազմուած ըլլալ, այլք այնպիսի մոլորակներէն շրջապատուած կրնան ըլլալ, որոնք, այլ եւս լոյս չունենալնու պատճառաւ, կենաց տարրներ տաճելու վիճակին մէջ չեն տակաւին: Ոչ ինչ կ'ապացուցանէ թէ այս զրութիւնք բացառութիւն մի ըլլան, եւ թէ այդ բացառութիւնն սնրիինն նման զրութիւններէն կազմուած չըլլայ:

Ուրեմն, երեւակացութեան սահմանադր մէջ կը յածիմք միշտ եւ այս կերպիւ, մեղ ծանօթ եզոզ գործարանաւոր կենաց հան-

զամանքներէն բոլորովին տարբեր պայմաններ կրնան նմանապէս
ենթադրուիլ, եւ այսպիսի մտայածին յորինուածութեամբ արեւ-
զակներ ընակչօք լեցունել, վասն զի երեւակայութիւնն սահման
չունի: Եւ ճիշդ այս է զոր «Ասորջաբաշխաթիւն» անուանեալ լրա-
գրի խմբագրութիւնն՝ սքանչելի ինն մեղմաբանութեամբ կը կոչէ,
«ստեանել աչօք մտայ»: Երբ, կ'ըսէ, ընական գիտութեանց համար
զմեկու իրողութիւնը կը սրակսին, յայնժամ պարտ է «տեսնել
աչօք մտայ»:

Բայց ինչ է գիտութիւն մը որ, կարելի եւ հնարաւոր իրո-
ղութեանց վրայ յենու համար, իրական եւ ապացուցեալ եղեւ
լութիւնները մէկգի կը թողու:

Այս՝ ոչ թէ գիտութիւն, ալ զուտ վիպասանութիւն կը կոչուի:

ՅՈՒՂ. Վ. ԲՕԼԱԹԵԱՆ.

ՅԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(PROGRESSISMUS)

Դարուս պիտաւոր փիլիսոփայական՝ մեղրութիւններէն պիտա-
ւորագոյնն եւ ամենէն ընկալեալն է Յառաջադիմականութիւնը:

Արդէն եօթն եւ տասներորդ դարուն առջի կիսուն Դաւղիայ
փիլիսոփայական դպրոցին ամենէն գեղեցիկ եւ սուր հանձարները,
Մալպրանշ եւ Փատալ, առանց միջահատութեան, անտահման
յառաջադիմութիւն կը քարոզէին: Շատանց Փատալ, Եւրոպայի
խորազմնին փիլիսոփայն, ինչպէս կը կոչէին զինքն ժամանակա-
կիցք, յայտնի ըսած էր, որ ոչ անհատականը ումանք եւ եթ, այլ
ամբողջ մարդկութիւնը գիտութեանց մէջ հսկայաքաղ կը յառա-
ջադիմէ: Յայտնի է որ մէյմը սկիզբ եղած յառաջադիմութիւնը
չէր կրնար մնալ այս անձուկ սահմանիս մէջ. արդէն ութն եւ
տասներորդ դարու մէջ, յառաջադիմականութիւնը իր վերջնական
ձեւն առած էր:—Գերմանացի փիլիսոփայն, Լեսսինգ, քաջ մ'ա-
ւելի եւս յառաջ երթալով, ջանաց մարդկութեան մէջ ծածկուած

զօրութիւն մ'ապացուցանել, որմէ զրդեալ կ'ըսէր, մարդկութիւնը յակամայ կամս եւ: զրիթէ բոնագտտեալ զիմած էր 'ի հրէութենէ 'ի Քրիստոնէութիւն, եւ պիտի զիմէ 'ի քրիստոնէութենէ եւս առաւել կատարելագոյն կրօնի մը: Ըստ իւր վարդապետութեան անհատականք եւս այս յանաշագիմութեան մասնակից են, եւ որպէս զի իւր այս նորահար վարդապետութիւնը հաստատուն հիման վրայ կանգնէ՝ հոգեփոխութեան հասանդ զրութիւնն ընդունեցաւ:

Քանի՞ դարուս սկիզբներն 'ի հրապարակ հանեց ուրիշ նոր կարծիք մը, որ իւր նորութեամբը կրցաւ բազմաթիւ աշակերտներ իւր շուրջը բարբել: Ինչն կ'ըսէր թէ հետզհետէ իրարու յաջորդող սերունդք մին քան զմիւսն կատարեալ ըլլալով, վերջնականապէս պիտի գայ այնպիսի սերունդ մը, որ այս ամէն իրարու յաջորդող սերնդոց մէջէն կատարելագոյնն ըլլայ եւ անոնց պսակ: Յառաջադիմականութեան բուն հիմնադիրն եղաւ Հէկէլ գերմանացին, որ ամենայն ինչ ոչինչէն սկսելով կը համնի կատարելութեան, եւ երբէք կատարեալ չըլլար, վասն զի իրարու յաջորդող սերունդք կրօնիւ եւ արտաքին կենցաղավարութեամբ, գիտութեամբ եւ արուեստիւ մի քան զմիւսն կատարեալ են: Այս էր յառաջադիմականաց ընթացքն վերջին գարուս մէջ:—Գարուս երկրորդ կիսուն Գերմանական փիլիսոփայութեան հետեւող Գաղղիացի փիլիսոփայք, Տը Լա Մընէ, Քուզէն, գերմանական յառաջադիմականութիւնը առաւել եւս կոկիւղով, ուրիշ լարեմոյն կերպարանաց ներքեւ 'ի հրապարակ ամին, որ թէ 'ի հրէականին եւ թէ 'ի գործնականին տարածուած այնչափ մոլորութեանց մէջ, ասկից առաւել վտանգաւորը գուցէ չի գտնուի:

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Թ Կ Ր Օ Ն Թ

Հէկէլի հետեւող արդի գաղղիացի փիլիսոփայք, առաջնորդ ունենալով զՔուզէն, կը վարդապետեն թէ—մեր ճանչցած ճշմարտութիւնն առարկական եւ բացարձակ չէ, այլ ենթակայական եւ յարաբերական: Ըստ իրենց կարծեաց ճշմարտութիւնը կամ մեր

ստացած ծանօթութիւններն այնպէս փոփոխական եւ երկրուն են, ինչպէս որ մարդիկ ճշմարտութիւն, Կրօն, Իրաւունք, բարոյական սկզբունք, եւայլն, սերնդոց մտաւոր կրթութեան ստաբիլիտետին համաձայն, միշտ կը փոխուին Գիտութիւն ըստծնիս, նոյն իսկ Կրօնն անցաւոր ճշմարտութիւններ են, իւրաքանչիւր դար ունեցած է, ունի եւ պէտք է ունենայ իր կատարելագոյն ազանդը: Քրիստոնէութիւնն անգամ ուրիշ բան չէ, եթէ ոչ հեթանոսութենէ եւ հրէութենէ զազափարուած եւ ձուլուած ազանդ մը՝ որուն յընթացս ժամանակաց պիտի յաջորդէ կատարելագոյն կրօն մը:

Արդի յառաջադիմականաց այս վարդապետութիւնն, որ եւ իցէ կերպարանաց ներքեւ ալ մուծեալ ըլլայ, միշտ պատրուակեալ սկեպտականութեան կը միտէ: Իրենց դրօշներն երեք կէտ զլիսաւորաբար անընդունելի են, Ա. ճշմարտութեան ենթակայական ըլլալը, Բ. ճշմարտութեան փոփոխականութիւնը, Գ. եւ Կրօնի անցաւոր ճշմարտութիւնը եւ ըստ հետեւորդի փոփոխական ըլլալը:—

Ա.—Ճշմարտութեանց եւ ծանօթութեանց առարկականութիւնն ուրանալով նաեւ անոնց ճշմարտութիւնն ուրացած կ'ըլլանք: Թէեւ ճշմարտութեան հասնելու միջնորդները, այսինքն միտք, ներքին եւ արտաքին զգայունք, պատրանաց ենթակայ են, ի վերայ այս ամենայնի զիտենք եւ ծանօթ է մեզ որ ճշմարտութիւնը մեր մտաց կամ ծանօթութեանց առարկայից հետ միաբանին է: «Ծանօթութեան եւ ճանչցուած իրին միաբանութեամբ յառաջ կուգայ ճանաչումը» կ'ըսէ Ս. Թովմատ: (1) Մարդու ամեն ծանօթութիւնները կամ իրական փորձառական են, այսինքն իրական առարկայից վրայէն առնուած, եւ կամ զազափարական, այսինքն իրական առարկայից վրայէն վերացուած: Մենք փորձառական ծանօթութեան ձեռք ամեն արտաքին պարզաներէ անկախ առարկայից թէ էօնօն (Noménon) եւ թէ էրէօնօն (pha noménon) կը ճանչնանք, կ'ենթադրուի որչափ որ իրենց արտաքին զգալի սեպականութեամբք մեր վրայ կ'ազդեն: Բայց առարկուիլ կրնայ թէ ամէն առարկայ միշտ եւ ամէն առթի մէջ ուղիղ չի համապատասխաներ մեր ծանօթութեանց, զոր օրինակ. ինծի ցուրտ եկած օդն երկրորդի մը համար տաք է. սակայն այս առարկութենէս սա միայն կը հետեւի որ առար-

(1) Omnis cognitio, fit per assimilationem cognoscentis et cogniti.

կայից՝ զգայնոց վրայ ըրած ազդեցութիւնը՝ զգայնոց տրամա-
դրութեանը համաձայն է, ըստ որում զանազան տրամադրութեանց
համաձայն մի և նոյն առարկան կրնայ այլ և այլ պարագայից
մէջ տարբեր ազդեցութիւն ընել:

Արդ որովհետեւ ամեն առարկայ մեր զգայնոց վրայ ազդե-
ցութիւն կ'ընէ, ասկէ ուղղակի սա եզրակացութիւնս յառաջ
կուզայ որ առարկայից սեպհական և զգալի որպիսութիւններն
իրենց էութեանը վրայ հաստատուած են, այնպէս որ էութիւն
և սեպհականութիւն (էութիւն և երեւոյթ) իրարմէ չենք կըր-
նար բաժնել: Եթէ առարկայից վրայ էութիւն և երեւոյթ
տարբեր տարբեր են, և զգալի սեպհականութիւնն իրենց է-
ութիւնէն բոլորովին անկախ է, ինչո՞ւ համար նոյն առարկան
և նոյն ազդեցութիւնը հաւասարապէս ամենուն վրայ պիտի
չընէ: Ուրեմն չենք կրնար յառաջագիմականաց հետ ո՛չ մեր
ճշմարտութեանց ենթակայական ըլլալը և ո՛չ ալ ճանչցուած ի-
րին մտաց արիւնք ըլլալն ընդունիլ, այլ ասոր հակառակ գործ-
նականապէս պէտք ենք ընդունիլ որ մեր ամէն իրական փոր-
ձառական ծանօթութիւններն առարկական են, վասն զի առար-
կայից սեպհականութիւններէն կազմեալ ըլլալով, նոյն իսկ ա-
ռարկայից իրականութիւնն է:

Բ. Թէ ժամանակաւոր իրերը փոփոխական են, կարծեմ ոչ
որ կ'ուրանայ, բայց թէ ճշմարտութիւնն և ըստ հետեւորդի
մեր ծանօթութիւններն ալ փոփոխական են, սխալ է, որովհետեւ
մեր ստացած ծանօթութիւնները առարկայից էութեանը համա-
պատասխանող էական ծանուցիչներէ կազմուած են: Առարկայից
էութիւնն անփոփոխ է, վասն զի էակին կամ առարկային առար-
կական ճշմարտութիւնն, այնպէս ըլլայն է, ինչպէս որ Աստու-
ած զասոնք ճանչցած է: Արդ Աստուծոյ ճանաչումը և կրու-
թիւնը (յԱստուած՝ ըլլալ, ճանաչել, կամենալ միեւնոյն է) ամեն
իրական և հնարաւոր քէակի պատճառն է: Իսկ մեր զառարկան
ճանչնալն պարզ մտաց գործողութիւն մըն է: Առարկաները զգայ-
նոց վրայ ազդելով իրենց իմանալի պատկերներն իբրև ՚ի հայ-
ելուջ՝ կը դրոշմեն: Զգայունք այս իրենց վրայ եղած ազդեցու-
թիւններն ու պատկերները մտաց առջեւ կը հանեն, որով
միտքը զասոնք, այլոց հետ համեմատելով, բաղդատելով, քննե-
լով, կը հասնի այնպիսի դադափարի կամ ճշմարտութեան մ'որ
առարկաներէն կախում ունենալով, նոյն իսկ անոնց նմանու-
թիւնն է: Ծշմարտութիւն կամ առարկայ ճանչցած ժամանակնիս

հարկ է որ ճանճանք այնպէս, ինչպէս որ է իրին էութիւնը: Արդ առարկայից էութիւնն անսփոփոխ է. վասն զի ասոնց էութիւնը յԱստուած գոյութիւն ունի, այսինքն Աստուած 'ի յաւիտենից միայն իր էութիւնը չի մտածեր, այլ նաև այն ամենայն ինչ, որ իրմէ դուրս կրնայ ժամանակաւ գոյութեան դալ: Միայն այս տեսակէտէս առեալ ճշմարտութիւնը մեզի հնթակայական կ'ըլլայ, առանց միանգամայն իր առարկականութիւնը կորսնցնելու: Առարկայից եւ ճշմարտութեանց առարկականութիւնն ուրացուելուն պէս, ամենայն ճշմարտութեանց հեղինակ կ'ըլլայ միտքը, եւ այսու՝ հին փիլիսոփայից ազանցը կ'ախտանանք: Եթէ ճշմարտութիւն մը, որ դարուց 'ի դարս պիտի փոփոխի, եւ այսօրուան մեր դաւանած ճշմարտութիւնը ժամանակաւ լաւագոյն ճշմարտութեան տեղի պիտի տայ, այն ատեն կանխաւ պէտք է Սկեպտիկեանց հետ ճշմարտութեան հետամուտ ըլլալէն հրաժարիլ:

Գ. Իսկ յառաջադիմականութիւնը կրօնի մերձեցնել եւ պընդել որ ամէն կրօն հասարակաց մտայ ծնունդ եւ անցաւոր ճշմարտութիւն է, ամեն ճշմարտութիւն եւ կրօն ուրանալ ըսել է: Եթէ կրօնը մարդկային հանճարոյ զիւան ըլլար, եւ նախաւոր յայտնութեան եւ ազգաց աւանդութեան մնացորդաց վրայ հիմնեալ, տարակոյս չիայ թէ ամենայն ստութեամբ եւ մոլորութեամբ զեղուն թաթաղուն կ'ըլլար. եւ որուն կրնար յընթացս ժամանակաց յարաբերութեամբ լաւագոյն կրօն յաջորդել: 'Ի ըստուղութիւն մեր ըսածին, բանանք պատմութեան էջերը. հոն կը գտնենք հեթանոս ազգաց հիմնադիրներուն ու օրէնադէտներուն հաստատած եւ հիմնած կրօններն որ 'ի սուղ ժամանակիւնհետացած են երկրիս վրայէն: Սոկրատներու, Պլատոններու՝ նմանեաց կրօններն առ նուազն հարիւր կամ երկու հարիւր տարուան մէջ իրենց ընթացքը կատարած են: Ճշմարիտ եւ հաստատուն կրօնը այնպէս հաստատուն եւ անշարժ պէտք է ըլլալ, ինչպէս որ իւր առարկան Աստուած՝ հաստատուն եւ անշարժ է, եթէ կրնանք այսպիսի բացատրութիւն մը գործածել: Այսպէս ուրեմն ճշմարիտ յաստուծուտ յայտնեալ կրօնն երբևք չի կրնար յընթացս ժամանակաց յարաբերութեամբ՝ ճշմարտագոյն կրօնի տեղի տալ: Վասն զի Աստուած, գերբնական յայտնութեան վրայ հիմնեալ կրօնին հեղինակը, չկրնար երբևք սուտ ճշմարտութիւն յայտնել: Դարձեալ ճշմարիտ կրօնի մէջ յաջորդ յայտնութեամբ յայտնուածը՝ նախորդ յայտնութեամբ չի կրնար ուղղուիլ: Աստուած յէութիւնն իւրմէ չէ

կարող սխալ յայտնութիւն ընել, որ յետոյ ուղղուիլ կարենայ: մի միակ եղած յայտնութիւնը կը բովանդակէ յինքեան ամենայն ճշմարտութիւն: Բայց ոչինչ ընդ դէմ է որ Աստուած իւր նախորդ յայտնածը յաջորդ յայտնութեամբ առաւել եւս լուսաւորէ, մեկնաբանէ եւ իրբու ի հայելւոջ մեր աչաց առջիւ գնէ, որովհետեւ հոս խնդիրը յայտնութեան բովանդակած ճշմարտութեանց խելամտութեան վրայ է: «Մի միայն յառաջագիմութիւն օրինաւոր է «կրօնի մէջ, կ'ըսէ սրբազան մատենագիր մը, սիրելի զԱստուած եւ «զկրօն քան որչափ սիրեցին մեր նախնիք: Յայտն քեզի ամենա-«կատար ազատութիւն տրուած է, եւ առ է մի միայն թող տրբ-«ուած յառաջագիմութիւնը: (Իւրբիմաց Պատասխաններ)

Յ Ա Ռ Ա Ջ Ա Դ Ի Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Ի Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Գերմանացի եւ Գաղղիացի արզի յառաջագիմականք միաբերան կը վարդապետեն որ թէ՛ անհատականք եւ թէ՛ ամբողջ մարդկութիւնը անընդհատ գիտութէնէ ի գիտութիւն յառաջագնէմ կը նկրտի: Ընդհանուր ընկալեալ կարծիք մըն է թէ գիտութեան սահմանին, որ մարդկային մտաց ընդհանրապէս գրուած է, առանձնականք եւ մարդկութիւնն ինքնին տակաւ առ տակաւ կը մերձենայ, որ ըսել է թէ մարդս եւ թէ ամբողջ մարդկային ազգը ծանօթութեանց եւ գիտութեանց մէջ օր քան զօր կը յառաջագիմէ: Սյս կարծիքը մեզի կանոն եւ առաջնորդ առնելով քննենք ըստ կարելւոյն թէ՛ անհատականաց եւ թէ՛ ամբողջ մարդկութեան ըրած յառաջագիմութիւնը: — Անհատականն ուրեմն տղիտութեան վիճակէն գիտութեան վիճակ կը մտնէ, տակաւ առ տակաւ իր ծանօթութիւնները կ'ընդարձակէ այլոց միջնորդութեամբ, իւր զազափարսերը կը հարստացնէ ըրած գննութիւններովն ու փորձերովն, եւ միտքը, ան մեծ, ան ազնիւ միտքը, կը համի աջակիտի ճշմարտութեանց, եւ այնպիսի գիւտեր կ'ընէ, որ յառաջ անծանօթ էին, զուցէ նաեւ ամբողջ սերունդի մը համար: Ընդհան-

րապէս խօսելով սոսկական անձ մը իւր զիտցածը, ճանչցածը, զըտածն իրեն չի սեպհականեր: Ինքն ալ հասարակաց ստացուածք եղող ճշմարտութեանց եւ գիտութեանց վրայ իւր զիտցածները, ճանչցածներն ու գիւտերը կը յաւելու եւ այլոց կ'աւանդէ: Այսու եղանակաւ ահաւասիկ անհատականաց ումանց ծանօթութիւններն ու գիւտերը հասարակաց հարուստ ազդիւր կ'ըլլան: Եւ այսպէսով սերունդ մը իւր զիտցածը, գիւտերը ուրիշ սերընդեան կ'աւանդէ: Այն բարձրութիւնն ու ընդարձակութիւնն, որ առած են արդի ժամանակիս գիտութիւնները, պտուղ են ինն եւ տան զարուց սերնդոց անխոնջ եւ քրտնաջան աշխատութեան: Ուրեմն չենք կրնար ուրանալ որ անհատականք եւ ամբողջ մարդկային ընկերութիւնը կը յառաջադիմէ: Բայց այս յառաջադիմութիւնը, ըստ յառաջադիմականաց, ոչ անընդհատ առանց միջահատութեան է եւ ո՛չ ալ անսահման:

Յառաջադիմութիւնն առանց միջահատութեան չէ: Յառաջադիմութիւնը կամքէ, ներքին ու արտաքին պարագաներէ կախում ունի. օրինակ մեզի Ասորիք, Քաղղէացիք, եւ ուրիշ այնչափ անչափ ազգեր, որոնք երբեմն գիտութեանց եւ արուեստից վերջին հնարաւոր կատարելութեան զապաթն հասած էին. սակայն այսօր տգիտութեան եւ յետախաղաչութեան վիճակի մէջ են. ինչո՞ւ արդեօք. վասն զի, 'ի բաց թողունք որ բնական իրաց կարգն զայս կը պահանջէր, արտաքին պարագաներն իրենց նպատամատոյց չէին: Ոչ այնչափ կամքը, որչափ պարագան ու առիթն է զմարդ գիտուն ընողը: Եթէ պարագաները յարմար եւ պտույճ չեն, եթէ պարագաները նպատատւոր չեն, որչափ որ ալ անձ մը գիտութեան սէր եւ բաղձանք ունենայ, անկարելի է, բառին ամեն նշանակութեամբը հանդերձ, գիտուն ըլլալը եւ գիտութեան մէջ յառաջադիմելը: Եթէ վիշտասաներորդ դարը չ'ունենար իւր Լեւոնը, եւ տասն եւ եօթներորդն իւր Լուդովիկոսը, ոչ վիշտասաներորդ դարը իւր Ռաֆայէլներն եւ ո՛չ տասն եւ եօթներորդն իւր Բուալոնները, Բոսիւէները կ'ունենար, եւ այլն. այսպէս ուրեմն եթէ ժողովրդեան մէջ չգտնուին մեկեկեաններ, որ գիտութեանց ձեռք բռնեն, եւ եթէ ժողովրդեան մը արտաքին պարագաները նպատամատոյց ձեւնտու չեն, անկարելի է յառաջադիմելը: Քիչ արգելք չեն նաեւ միօրինակեալ եւ տեւական պատերազմունք, սովք եւ սրածութիւնք:

Այսպէս Յոնք ընդ լծով Հռոմէական պետութեան, այսպէս այնչափ անթիւ ու անհամար ազգք եւ ազիւնք, որոնք խուժա-

ղութ եւ բարբարոս ազգաց արչաւանքներով կորուսին իրենց առաջին պայծառութիւնը:—Յառաջադիմութիւնն անսահման ալ չէ: Մարդուս միտքն ըստ ինքեան անձուկ է, հասողութեան աստիճանը չափաւորեալ: Մտաց այսպէս անձուկ եւ չափաւորեալ ըլլալը մասամբ իւրք մտաց կամ հասողութեան զօրութենէ եւ մասամբ իւրք ճանաչելի առարկաներէն կախում ունի: Մարդկային միտքն ամենազօր ալ չէ: Մարդկան մեծագոյն մասին հասողութիւնը տկար է: Եւ եթէ անձ մը հասողութեան կամ մտաց սրութեան վերջին հնարաւոր աստիճանն ունենար, ի վերայ այսր ամենայնի կարողութիւն մըն է իւր ունեցածն որ պէտք է կրթիւ: Արդ եթէ դաստիարակութիւնը պակասաւոր է, միտքն ալ կը մնայ պակասաւոր, եթէ անկիրթ միտքն ալ նոյնպէս կը մնայ անկիրթ: Հաւատարմք է, զոր ամենայն ոք իւր անձնական փորձովը զիտէ, թէ այնպիսի անձինք, որոնք մեծամեծ հանճարոյ եւ ճրից տէր են եւ մեծամեծս առնելու որոշուած են, սակայն անպիտան մնացած են: Արդ ենթադրենք նաեւ որ միտքն ունենայ վերջին հնարաւոր հասողութիւն եւ մեծամեծ ճրիւք ալ օժտեալ ըլլայ, սակայն եւ այնպէս, միտքը, ինչպէս որ տեսանք, կամքէն կախում ունի: Եթէ կամքն այլ եւ այլ կրից միտութեանց պէժուփ հողմերէն աստանդակման այսր անդր ծփի, անկարելի է որ միտքը կարենայ գործել եւ ճշմարտութեան հասնիլ: Որչափ միտքն ուղէ ճշմարտութեան հասու ըլլալ, այնչափ կ'ընդլիմանայ կամքը: Ժայռ մըն է, որուն պէմ բախելով հարկ է որ խորտակի: Բայց եթէ միտքն ունենայ սուր հասողութիւն, եւ կամքն ալ՝ երկաթեայ հաստատութիւն, սակայն եւ այնպէս ոչ անհատակման եւ ոչ ալ ընկերութիւնը կրնայ անընդհատ յառաջադիմել: Ատոր արգելք կը զնեն նախ ճանաչուելի իրերը եւ երկրորդ ստանալու կամ հասնելու եղանակը: —Նախ մարդուս կեանքն կարճ է եւ ստիպուած անձուկ սահմանի մէջ անցընելու, որով չի կրնար ամէն ճշմարտութիւն ճանչնալ, ամենայն ինչ ուրիշներէն ստիպուած ըլլալով ուսանիլ, շատ բան իրեն համար տեղեայ հեռաւորութեան այս կամ այն ինչ պատճառաց համար անստուգութեան քօղիւ ծածկուած է:

Այս է ահաւասիկ այն սահմանը, որ մարդկային մտաց համար ջանացինք որոշել, իսկ զպոլ ամբողջ մարդկութեան՝ անկարելի է որ այս սահմանն սնցնի: Այս սահմանին մէջ չկրնար յանահման (in infinitum) յառաջադիմել, առ սուսուելն արանց որոշ եզր (ad infinitum) ունենալու պիտի յառաջադիմէ:

Եթէ այս բրած յառաջադիմութիւննին նոյն իսկ զբուռն ժա-

մանակաց տեւէ, սակայն եւ այնպէս ամբողջ ընկերութիւնը պիտի չկարենայ երբեք այն սահմանն ու կէտն անցնիլ կամ հասնիլ, զոր մէնք կարելի եւ հնարաւոր ցուցրցինք: Մոլորութեան և ճշմարտութեան յառաջադիմութեան երկու եզրներն են, յորս հարկ է որ թարթափի մարդկութիւնս: Մոլորութիւնը, կ'ըսէ Մատիլեոն, «Քաղցիոյ ամենէն երեւելի սրբազան ճարտարախօսը, այնպէս «մարդուս հետ սերտ կապուած է, ինչպէս հողի եւ մարմին»: Ամէն ազգ, ամէն սերունդ ամէն դար ունեցած է եւ ունի իւր մոլորութիւնը. որչափ սերունդ մը իւր նախորդին մոլորութիւնները բառնայ, ի վերայ այսր ամենայնի ինքն ալ հարկ է որ ունենայ իւր մոլորութիւնը: Ինն եւ տասն դարերու սերունդք միայն իրենց նախընթացներուն մոլորութիւնները բառնալու աշխատած են: Մոլորութիւնները բառնալ եւ միանգամայն մոլորութիւններ յաւելուլ» անաւասիկ միով բանիւ մեր յառաջադիմութիւնը:

* * *



ԼԵԶՈՒԱՔՆՆԱԿԱՆ

Ք Ա Ղ Յ Դ

Ընթերցողներն անշուշտ պիտի հետաքրքրուին իմանալու թէ ինչ արդեօք յօղուածապիլին աս բնաբանին ներքեւ կրնայ գրել: Եթէ գրելիքս ըսեմ, կարգացողներէն շատերն իսկոյն պիտի պաղին մնան եւ ոմանք թերեւս նոյն խկ դառնանան: Ազգաբանական է գրութիւնս, սակայն պիտի հարցուիմ անտարակոյս թէ րոջք ինչ գործ ունի ազգաբանութեան հետ: Գիտնալու է սակայն՝ որ սերունդ, տոհմ ու աղբ ոչ մարդիկ ու կենդանիք եւ գործարանաւոր մարմինները միայն այլ բառերն ալ ունին. վասըն գի մարդկային լեզուն ալ, ընդհանրապէս խօսելով, ամենակատարեալ կազմակերպութիւն մըն է, որ կը ծնանի, կ'աճի, կը ծերանայ ու կը մեռնի, վասն գի փոփոխական է, ինչպէս որ համեմատական լեզուաքննութիւնն ապացուցած է: Ա. յսպէս տակաւ փոխուելով՝ Հնդկերոպական նախամայր լեզուն որ Քէ բուն էր երբեմն յետոյ դանազան ոստերու բաժնուած է: Հնդկերոպաբուն նախալեզուն գլխաւոր ոստերն են հին հնդկերէն, պարսկերէն, հայերէն, սլաւերէն, յունարէն, լատիներէն եւ այլն: Աս գուտրներն յետոյ դարձեալ՝ մայրական հասակի մը մէջ մեծ բեղմնաւորութիւն սուցած են: Ա. յսպէս հին լատիներէնն, որ ումանական ծանօթ լեզուներուն ճշմարիտ մայրն է: Նմանապէս մեր նախածին հայերէնն ալ որ մեզի անծանօթ է, բազմածրնունդ մայր մըն էր, այսինքն այլ եւ այլ հին գաւառալեզուներ յառաջ բերած էր, որոնց մէջէն՝ մեծագոյն բախտի հանդիպելով՝ գրականութեամբ մինչեւ մեր ժամանակն հասած է միայն ան գաւառաբարբանն, զոր մեր առաջին թարգմանիչները մատենագրած են՝ հաւանօրէն տեղական կամ քաղաքական հանգամանքով վայն նախապատիւ ընելով միւսներէն: Բայց թէ ուրիշ կենդանի գաւառականներ ալ կը գտնուէին, յայտնի է ինչ ինչ մընացորդներէ, որոնք՝ թէեւ խորագոյն հոլութեան կնիքը վրանին կը կրեն, սակայն ոսկեղէն գարու բառական մթերքին մէջ մըտնելու պատիւ չեն ունեցա՝:

Ատոր պատճառը չենք կրնար ըսել թէ մոռացութիւնը կամ անգործածականութիւնն եղած է, վասնզի բառին շատ սովորական իմաստն աս հաւանականութիւնները կը մերժէ: Ուրեմն ուրիշ կերպով աս երեւոյթն անկարելի է մեկնել բայց եթէ այլ եւ այլ զաւառալեզուի հանդամանքով, որով կարելի էր բառ մը մեր նախկին թարգմանիչներէն արհամարհուած կամ բոլորովին անծանօթ ալ մնայած ըլլալ: Ա. յոպիսի տարր մըն է անա գողտրիկ բառը ֆողք, որ մեր աս անգամու քննութեան նիւթ կը մատակարարէ: Արդ մեր հին գրականութեան հմուտները զիտնն որ ֆողք հան գոյութիւն չունի, զոր սակայն հետեւորդ դարու մատենագրութիւնն յանկարծ երեւան հանած է՝ մոռացութենէ զայն փրկելով եւ աս կերպով միանդամայն գնահատելի ծառայութիւն մը մատուցանելով համեմատական լեզուաքննութեան:

Մեր հաստատ համոզումը աս է որ ֆողք ու ֆողքի իրարու քոյր են ձեւով եւ երբեմն միեւնոյն բանն էին, ինչպէս ստորեւ պիտի ցուցնենք: Աս երկուքը նախ նշանակութեան եւ ապա տառերուն կողմէն կը քննենք:

Նշանակութեան ազգականութիւնը գիւրու կը ճանչցուի, մանաւանդ թէ մենք ալ հիմա կը զոմնք զայն, վասնզի չը նկատելով սնոր հին գործածութիւնը, մեր մէջ ալ այժմ գործածական է ֆողքը գաղղիերէն Tendre իւսաստով: Հին մասենագրութիւնը կ'ըսէ ֆողքը Բարբառ, ֆողքիկ Բան+, անյրե, անոն եւ այլն: Աս օրինակներէն եւ մեր արդի կիրառութիւնէն կրնանք ապահովութեամբ հետեւցնել թէ ֆողք, ֆողքիկ թէեւ ֆողք, ֆողքիկ կը նշանակէին, բայց ոչ այնչափ նեխական որչափ Բարոյանն առում ունէին:

Նոյն բառերուն տառական խնամութիւնն ալ զժուար չէ ցուցնել: Եթէ ասոնց ձայնաւորները նախ քննենք՝ միայն « եւ » ձայներու տարբերութիւնը կը դռնենք. իսկ աս տարբերութեան լոկ զաւառական պէսպիսութիւն ըլլալը չենք կրնար ուրանալ. զեռ ցայժմ տեղ տեղ մեր « հնչածն » կը հնչեն, ուր սակայն առաջնութիւնն հաւանօրէն մեր « ձայնին տալու է: իսկ + եւ ք բաղաձայններուն մեկնութիւնն ալ մեծ զժուարութեան մը չի բախիր: Չհաշուելով մեր զաւառալեզուին արտաբերութիւնն որ + եւ ք իրարմէ հաղիւ թէ կը տարբերէ՝ դռնէ գրադէտներու քով, նոյն անտարբերութիւնը հին զրչաղիքներ ալ կը ցուցնեն հետագայ բառերուն մէջ + եւ ք փոխանակելով:

որո՞ կամ Կարգորո՞ նախածեւ մը, որմէ մէկ զաւտականին մէջ
յառաջ եկած է Կողջը, իսկ միւսին մէջ Կողջը, իսկ աս վերջինը
նորայոյն արտասանութեան հետեւութեամբ սակաւ Կողջը զրա-
կան ձեւն առած է: Զ. ՍԵՐ. ՏԷՐՎԻՇԵԱՆ


ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ

Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԱԼ
ՑԻՄՆՍԵՐԷՆ ԲԱՌԻՑ ՎՐԱՅԷՆ




(Շարայարութիւն) (*)

Հետեւեալ պատկերը այս ճառագայթումը կը ցուցնէ:



Ձոր օրինակ tête բառը նկատուելով իբրև մարմնոյ վերին

(*) Տե՛ս Պատկեր Բէ՛ւ 13, էջ 312



ՊԱՏԿԵՐ տասն եւ հինգ օրը՝ մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց եւ օտար երկիրներու համար
բոլորտարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Իջրադրանցիչը թիւ 2 դանեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւջիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ թերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معرف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر